

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔԻՄԻԱ

2014 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2013

Պատասխանատու՝ Գյուլնարա Փալիկյան

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի ներկա տարբերակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	5
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ	
ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ	6
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....	15
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	15
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ	16

ՆԱԽԱԲԱՆ

2014թ. «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննության թեստերում նախորդ տարիների թեստերի համեմատությամբ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Մշակվել են նոր տեսակի առաջադրանքներ, ըստ այդմ փոխվել է քննական թեստերի կառուցվածքը: Ուղեցույցում ներկայացվում է թեստի նոր կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների լուծման եղանակների և պատասխանների ձևաթղթի լրացման կարգի բացատրությունը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

2014 թ. պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք են ընդունվում հանրակրթական հիմնական դպրոցում գործածության համար երաշխավորված քիմիայի ծրագրերը և դասագրքերը, ավագ դպրոցի քիմիայի ընդհանուր հոսքի ծրագրերն ու երաշխավորված դասագրքերը, ինչպես նաև 2012, 2013թ. և 2014թ. հրատարակված «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննության շտեմարանները:

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննության թեստը բաղկացած է երկու՝ Ա և Բ մակարդակներից և ներառում է 57 առաջադրանք (80 միավոր): Ա մակարդակը նախատեսված է ավագ դպրոցի «Քիմիա» առարկայի ավարտական քննության համար: Բ մակարդակն Ա մակարդակի հետ միասին նախատեսված է միասնական քննությունների համար:

Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ:

«Պնդումների փունջ» կոչվող առաջադրանքները նորոյթ են:

Թեստի Ա մակարդակը պարունակում է 45 առաջադրանք, որոնցից 40-ը ընտրովի պատասխանով են, 4-ը կարճ պատասխանով, իսկ 1-ը վեց պնդումից կազմված պնդումների փունջ է: Ա մակարդակում ընդգրկվում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Ա մակարդակը գնահատվում է առավելագույնը 50 միավոր:

Բ մակարդակը պարունակում է կարճ պատասխան պահանջող 24 ենթաառաջադրանքից կազմված 11 առաջադրանք, որոնցից 2-ը մեկ հարցանի առաջադրանքներ են, 5-ը՝ երկուական ենթաառաջադրանքից կազմված առաջադրանքներ են, 4-ը՝ երեքական ենթաառաջադրանքից կազմված առաջադրանքներ են, որոնց կատարման համար տրվում է առավելագույնը 24 միավոր և 1 պնդումների փունջ, որի համար տրվում է առավելագույնը 6 միավոր: Բ մակարդակում պետք է ապահովվի ծրագրային ամբողջականություն՝ քիմիայի առարկայական ծրագրի բոլոր թեմաների ընդգրկմամբ: Բ մակարդակը գնահատվում է առավելագույնը 30 միավոր:

Պետական ավարտական և միասնական քննական թեստի՝ Ա և Բ մակարդակների առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության

միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի (Ա և Բ մակարդակների) կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

Դպրոցի շրջանավարտի ավարտական գնահատականը որոշվում է 20 միավորանոց սանդղակով:

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Ա. Պարզ


Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Նմուշ 1. Ո՞րն է միացության մոլեկուլում տարրի մոլային բաժինը.


- 1) տարրի ատոմների թվի հարաբերությունը բոլոր ատոմների գումարային թվին
- 2) տարրի հարաբերական ատոմային զանգվածի հարաբերությունը միացության մոլեկուլային զանգվածին
- 3) բոլոր ատոմների գումարային թվի հարաբերությունը տարրի ատոմների թվին
- 4) միացության հարաբերական մոլեկուլային զանգվածի հարաբերությունը տարրի ատոմային զանգվածին

Նմուշ 2. Ածխածնի առաջացրած n° ր պարզ նյութի բյուրեղավանդակն է պատկերված, և ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմներն այդ նյութում.

- 1) ալմաստ, sp^3
- 2) գրաֆիտ, sp
- 3) ֆուլերեն, sp
- 4) գրաֆիտ, sp^2




Նմուշ 3. Ո՞ր գծապատկերն է ճիշտ արտացոլում հաստատուն ջերմաստիճանում իրականացվող ռեակցիայի արագության կախումը՝ ժամանակից (t).



- 1)
- 2)
- 3)
- 4)

Նմուշ 4. Ո՞րն է կալցիում պարունակող X_1 և X_2 նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարային թիվը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) 42
- 2) 74
- 3) 202
- 4) 116

Բ. Համապատասխանեցում

Մյուսրինակ առաջադրանքների համար տրվում են երկու կամ երեք շարքեր և այդ շարքերի միավորների համապատասխանեցումով կազմված պատասխանների տարբերակներ: Տրված շարքերից պետք է ընտրել պատասխանների այն տարբերակը, որում միավորների համապատասխանեցումը ճիշտ է:

Նմուշ 5. Համապատասխանեցրեք թթվի քիմիական բանաձևը, անվանումը և քլորի տարրի օքսիդացման աստիճանը:

Բանաձև	Անվանում	Քլորի օքսիդացման աստիճանը
ա) HCl	1) քլորային	Ա) +1
բ) HClO	2) քլորական	Բ) +5
գ) HClO ₂	3) քլորաջրածնական	Գ) -1
դ) HClO ₃	4) պերքլորական	Դ) +3
ե) HClO ₄	5) հիպոքլորային	Ե) +7
		Զ) 0

- 1) ա3Գ, բ5Ա, գ1Դ, դ2Բ, ե4Ե
- 2) ա3Զ, բ5Բ, գ1Գ, դ4Դ, ե2Ա
- 3) ա1Գ, բ2Դ, գ3Զ, դ4Ա, ե5Բ
- 4) ա2Ա, բ3Դ, գ4Զ, դ5Գ, ե1Ե

Գ. Նախադասության լրացում:

Նմուշ 6. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ սահմանման մեջ.

Արտաքին միատեսակ պայմաններում (t և p) տարբեր զազերի հավասար միներույն թվով են պարունակվում:

- 1) զանգվածներում, մոլեկուլներ
- 2) ատոմներ, ծավալներում
- 3) ծավալներում, մոլեկուլներ
- 4) զանգվածներում, ատոմներ

Դ. Համարների շարքի ընտրություն

Այսօրինակ առաջադրանքների համար տրված շարքերից պետք է ընտրել պահանջին համապատասխանող համարների շարքը:

Նմուշ 7. Հետևյալ մասնիկներից որո՞նք կարող են ցուցաբերել վերականգնիչ հատկություն.

ա) Cl^{\ominus} , բ) Cl^{\ominus} , գ) Na^{\ominus} , դ) Na^+ , ե) S^{+2} , զ) S^{+6} :

- 1) բ, գ, զ
- 2) ա, բ, դ
- 3) ա, բ, գ, ե
- 4) բ, դ, ե, զ

Ե. Երկհարցանի

Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է երկու հարց՝ պատասխանների ընտրությամբ: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:

Նմուշ (8-9). Անոթում նորմալ պայմաններում խառնել են մեկական մոլ մեթան և էթան:

8. Որքա՞ն է գազային խառնուրդի զանգվածը (գ)

- 1) 2
- 2) 16
- 3) 30
- 4) 46

9. Որքա՞ն է գազային խառնուրդի խտությունը ըստ ջրածնի.

- 1) 8
- 2) 11,5
- 3) 15
- 4) 23

Գնահատման չափանիշը: Ա մակարդակի 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

Ձևաթղթի լրացման կարգը: Պատասխանների ձևաթղթում Ա մակարդակի 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ 3-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 1-ինն է (տե՛ս նկ. 1):

	...	3	...
1		X	
2			
3			
4			

Նկ.1

II. Պնդումների փունջ

Այսօրինակ առաջադրանքներից յուրաքանչյուրում ներկայացվում է վեց պնդում որևէ թեմայի վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրին կարելի է տալ երեք պատասխան՝ «Ճիշտ է», «Միայն է» կամ «Զգիտեմ»: Այսօրինակ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Նմուշ. Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ծծմբի (IV) օքսիդի վերօքս հատկությունների վերաբերյալ.

- 1) $SO_2 + 2H_2O + Cl_2 = H_2SO_4 + 2HCl$ *ռեակցիայում օքսիդացման արդյունքում ստացված նյութի գործակիցը 1 է:*
- 2) $5SO_2 + 2KMnO_4 + 2H_2O = K_2SO_4 + 2MnSO_4 + 2H_2SO_4$ *ռեակցիայում այն վերականգնիչ է:*
- 3) $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$ *ռեակցիայում ամբողջ ծծումբը ստացվում է ծծմբի (IV) օքսիդի վերականգնումից:*
- 4) $2SO_2 + O_2 = 2SO_3$ *ռեակցիայի 80 % էլքի դեպքում $m_{\text{դրացած}}(SO_3) = m_{\text{փոխազդած}}(SO_2)$:*
- 5) $SO_2 + 2NaOH = Na_2SO_3 + 2H_2O$ *ռեակցիայում այն օքսիդիչ է:*
- 6) $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$ *ռեակցիայում ծծմբի (IV) օքսիդը ցուցաբերում է օքսիդացնող հատկություն:*

Գնահատման չափանիշը: Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար փնջին տրվելիք ընդհանուր միավորից հանվում է մեկական միավոր: Եթե հանվող միավորների թիվը հավասար է կամ գերազանցում է տրվող միավորների թվին, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո և ամբողջ թեստից վաստակած միավորներից միավոր չի հանվում: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում:

Ձևաթղթի լրացման կարգը: Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ 70-րդ առաջադրանքը «Պնդումներ փունջ» է և յուրաքանչյուր պնդման համար ընտրված պատասխանը լրացվում է հետևյալ ձևով՝ 1-ինը՝ «Ճիշտ է», 2-րդը՝ «Ճիշտ է», 3-րդը՝ «Միայն է», 4-րդը՝ «Ճիշտ է», 5-րդը՝ «Միայն է», 6-րդը՝ «Ճիշտ է» (տե՛ս նկ.2).

70	1	2	3	4	5	6
Ծիշտ է	X	X		X		X
Միայն է			X		X	
Չգիտեմ						


Նկ.2

III. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Ա. Մեկ հարցանի խնդիրներ

Նմուշ 1. Այլումինի և ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի փոխազդեցությունից անջատվել է 33,6 Լ (ն. ս.) ջրածին: Որքա՞ն է փոխազդած այլումինի զանգվածը (գ):

Նմուշ 2. Օգտվելով հետևյալ էներգիական դիագրամից՝ գտեք $A + B = C$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ):



Բ. Երկու ենթաատաջադրանքից կազմված խնդիրներ

Նմուշ (1-2). Մանգանի օքսիդի 4,58 գ նմուշը վերականգնելու համար ծախսվել է 1,792 լ (ն. ս.) ջրածին:

- 1) Որքա՞ն է այդ օքսիդի մոլային զանգվածը ($q/մոլ$):
- 2) Ի՞նչ զանգվածով (q) այլումին կծախսվի 1,5 մոլ այդ օքսիդը վերականգնելու համար:

Գ. Երեք ենթաատաջադրանքից կազմված խնդիրներ

Նմուշ(1-3). Նատրիումի հիդրոկարբոնատի 17,5% զանգվածային բաժնով 672 գ լուծույթին ավելացրել են 171գ բարիումի հիդրօքսիդ պարունակող 585 գ լուծույթ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո նստվածքը առանձնացրել են լուծույթից:

- 1) Որքա՞ն է նստվածքի զանգվածը (q):
- 2) Ի՞նչ զանգվածով (q) լուծույթ է ստացվել:
- 3) Որքա՞ն է լուծույթում պարունակվող ալկալիի զանգվածը (q):

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կլորացված արժեքները (բացի քլորից՝ 35,5):

Գնահատման չափանիշը: Բ մակարդակի 46-47-րդ առաջադրանքներից և 48-69-րդ ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:


Ձևաթղթի լրացման կարգը: Ա մակարդակի 41-44-րդ և Բ մակարդակի 46-69-րդ առաջադրանքներին ու ենթաառաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխանը կարող է լինել 0-9999-ը ամբողջ թվերից որևէ մեկը: Օրինակ 51-երորդ առաջադրանքի պատասխանը 8 է, 52 –երորդինը՝ 65, 53 –երորդինը՝ 216, 54–երորդինը՝ 6439: (տե՛ս նկ.3):

51				8
52			6	5
53		2	1	6
54	6	4	3	9

Նկ.3

Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը: Ձևաթղթում տրված է Ա և Բ մակարդակներում սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի վերևի

հորիզոնական վանդակում պետք է գրվի առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակներից մեկում դրվի «X» նշանը (տե՛ս նկ. 4):



Կարճ պատասխանով առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը՝ կարճ պատասխանի լրացման սկզբունքով (տե՛ս նկ. 5):



Պնդումների փնջի սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրվի առաջադրանքի համարը և պնդման համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակում դրվի «X» նշանը (տե՛ս նկ. 6):



3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական ծրագրերի: Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր բաժնից թեստում ընդգրկվող առաջադրանքների տոկոսային և միավորային համամասնությունները (տե՛ս աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Հ/Հ	Քիմիայի հիմնական բաժիններ	Մոտավոր մասնաբաժին (%)	Նախնական առավելագույն միավոր (մոտավոր)
1	Ընդհանուր քիմիա	34-35	27-28
2	Անօրգանական քիմիա	35-36	28-29
3	Օրգանական քիմիա	26 -23	20-18
5.	Քիմիան և կյանքը	5-6	4-5
	Ընդամենը	100	80

4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ.

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ

5. ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՍՈՒՇԸ

2014թ. միասնական քննություն
Պատասխանների ձևաթուղթ
Քիմիա



ազգանուն _____
 անձնական համար _____
 անուն _____ հայրանուն _____



Եղևբ աշակիր

- * Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
- * Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնջերում Ձեր ընտրած տարրերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
- * Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1234567890

1 1
 ԹԻՆԱՆ ՈՂ

Մ. մակարդակ	Ընտրովի պատասխանով առաջադրանքներ																				
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1																					1
2																					2
3																					3
4																					4
	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	
1																					1
2																					2
3																					3
4																					4

Գրելու տարածք 41 <input type="text"/> 42 <input type="text"/> 43 <input type="text"/> 44 <input type="text"/>	Կարճ պատասխանով առաջադրանքներ 45 ճիշտ է <input type="checkbox"/> Սխալ է <input type="checkbox"/> Չգիտեմ <input type="checkbox"/>	Պնդումների փոնջ 1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/> 4 <input type="checkbox"/> 5 <input type="checkbox"/> 6 <input type="checkbox"/>	Ա և Բ մակարդակներում սխալ նշված պատասխանների փոխելու տեղը Ընտրովի 1 <input type="text"/> 2 <input type="text"/> 3 <input type="text"/> 4 <input type="text"/>	
	Գրելու տարածք 46 <input type="text"/> 47 <input type="text"/> 48 <input type="text"/> 49 <input type="text"/> 50 <input type="text"/>	Կարճ պատասխանով առաջադրանքներ 51 <input type="text"/> 52 <input type="text"/> 53 <input type="text"/> 54 <input type="text"/> 55 <input type="text"/> 56 <input type="text"/> 57 <input type="text"/> 58 <input type="text"/> 59 <input type="text"/> 60 <input type="text"/> 61 <input type="text"/> 62 <input type="text"/> 63 <input type="text"/> 64 <input type="text"/> 65 <input type="text"/>		Կարճ <input type="text"/> <input type="text"/> <input type="text"/> <input type="text"/>

Գրելու տարածք 66 <input type="text"/> 67 <input type="text"/> 68 <input type="text"/> 69 <input type="text"/>	Կարճ պատասխանով առաջադրանքներ 70 ճիշտ է <input type="checkbox"/> Սխալ է <input type="checkbox"/> Չգիտեմ <input type="checkbox"/>	Պնդումների փոնջ 1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/> 4 <input type="checkbox"/> 5 <input type="checkbox"/> 6 <input type="checkbox"/>	Ամբողջ մատրիցում փոխված պատասխանների քանակը <input type="text"/>	Պնդումների փոնջ ճիշտ է <input type="checkbox"/> Սխալ է <input type="checkbox"/> Չգիտեմ <input type="checkbox"/>
---	---	--	---	--

Արտադրել է պր. նախնայաավիթյանը
 Շանթի՛ եմ քննություն կարգիլի: